ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N2

«ԵՔ-ԲՄԽԾՁԲ-21/13» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի հայտերի բացման, գնահատման նիստի

« ԵՔ-ԲՄԽԾՁԲ-21/13» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի նիստի

Նիստի անցկացման՝

-վայրը՝Երևանի քաղաքապետարանի վարչական շենք (ք. Երևան, Արգիշտիի փողոց 1), 321/1 սենյակ.

-օրը՝ 18.01.2021թ,- ժամը՝ 15:00

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Կիրակոսյան

Հանձնաժողովի անդամներ Կ. Անտոնյան, Ա. Ղալումյան, Կ. Հարությունյան, Ռ. Աբրահամյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ի. Եղիազարյան

Ընդունել ի գիտություն, որ « ԵՔ-ԲՄԽԾՁԲ-21/13» ծածկագրով գնման ընթացակարգի վերաբերյալ ստացվել պարզաբանման հարցում.

Հարցադրում <<X>> ՍՊԸ-ն ցանկանում է մասնակցել <<ԵՔ-ԲՄԽԾՁԲ-21/13>> ծածկագրով գնման ընթացակարգին /այսուհետ՝ Ընթացակարգ/ և պատրաստ է բավարարելու Ընթացակարգի հրավերով սահմանված պահանջները, այդ թվում որակավորման չափանիշները, ինչպես նաև որակավորման և պայմանագրի ապահովումներ ներկայացնելու պահանջները:

Միաժամանակ <<X>> ՍՊԸ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացվող հայտով ՀՀ կառավարության 04/05/2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետի 6-րդ ենթակետի համաձայն՝ ներկայացնելու է նաև <<X>> ՍՊԸ-ի և <<Y>> ՍՊԸ-ի միջև կնքված գործակալության պայմանագիրը, համաձայն, որի եթե Ընթացակարգի արդյունքում <<X>> ՍՊԸ-ն կճանաչվի հաղթող և վերջինիս հետ կկնքվի պայմանագիր, ապա պայմանագրի գնման առարկա հանդիսացող ծառայությունների մատուցումը ամբողջությամբ /100%-ով պետք է իրականացվի <<Y>> ՍՊԸ-ի կողմից:

Վերոգրյալով պայմանավորված խնդրում եմ պարզաբանման կարգով հայտնել

1/ ընդունելի է պատվիրատուի /գնահատող հանձնաժողովի/ համար նման պայմանը, այսինքն կա որևիցէ նորմ, որը կարգելի <<X>> ՍՊԸ-ի կողմից հաղթող ճանաչվելու դեպքում գործակալության պայմանագիր կնքելու միջոցով, որը կտրամադրվի մասնակցի կողմից ներկայացվող հայտով, ծառայությունների մատուցումը տրամադրել <<Y>> ՍՊԸ-ին ամբողջությամբ /100%-ով

2/ եթե <<X>> ՍՊԸ-ն բավարարում է Ընթացակարգի հրավերով սահմանված բոլոր պահանջներին, արդյոք <<Y>> ՍՊԸ-ն էլ պետք է բավարարի Ընթացակարգի հրավերով սահմանված չափանիշներին /մասնագիտական փորձառություն, աշխատանքային ռեսուրսներ/ որևէ պահանջի, եթե այո, ապա խնդրում ենք նշել որ իրավական նորմի համաձայն:

Գնահատող հանձնաժողովի կողմից տրված պարզաբանում

Ի պատասխան Ձեր հարցման տեղեկացնում ենք, որ համաձայն գնումների գործընթացի կազմակերպման կարգի ՀՀ կառավարության 04.05.2017թ. հ.526-Ն որոշման 33-րդ կետի՝

1) պայմանագրի կողմը պատասխանատվություն է կրում գործակալի կամ ենթակապալառուի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի կամ ենթակապալառուի փոփոխման դեպքում պայմանագրի կողմը գրավոր տեղեկացնում է պատվիրատուին՝ տրամադրելով գործակալության կամ ենթակապալի պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում.

Միաժամանակ, համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 806 հոդվածի՝ 1. Գործակալության պայմանագրով մի կողմը (գործակալը) պարտավորվում է վարձատրությամբ մյուս կողմի (պրինցիպալի) հանձնարարությամբ, իր անունից, սակայն պրինցիպալի հաշվին կամ պրինցիպալի անունից և նրա հաշվին կատարել իրավաբանական ու այլ գործողություններ:

Երրորդ անձի հետ իր անունից և պրինցիպալի հաշվին կնքված գործարքով իրավունքներ ու պարտականություններ ձեռք է բերում գործակալը, թեկուզև պրինցիպալը վկայակոչված լինի գործարքում և գործարքը կատարելու հետ կապված անմիջական հարաբերությունների մեջ մտած լինի երրորդ անձի հետ:

Երրորդ անձի հետ պրինցիպալի անունից և նրա հաշվին գործակալի կնքած գործարքով իրավունքներ ու պարտականություններ ձեռք է բերում անմիջականորեն պրինցիպալը:

2. Գործակալության պայմանագիրը կնքվում է գրավոր:

3. Այն դեպքերում, երբ գործակալության պայմանագրում նախատեսված են պրինցիպալի անունից գործարքներ կնքելու համար գործակալի ընդհանուր լիազորություններ, պրինցիպալն իրավունք չունի երրորդ անձանց հետ հարաբերություններում վկայակոչել գործակալի մոտ պատշաճ լիազորությունների բացակայությունը, եթե չի ապացուցում, որ երրորդ անձը գիտեր կամ պետք է իմանար գործակալի լիազորությունների սահմանափակման մասին:

4. Գործակալության պայմանագիրը կարող է կնքվել դրա գործողության որոշակի ժամկետով կամ առանց դրա:

5. Օրենքով կարող են նախատեսվել գործակալության պայմանագրի առանձին տեսակների առանձնահատկությունները:

Ելնելով վերոնշյալից՝ տեղեկացնում ենք, որ Պատվիրատուի /գնահատող հանձնաժողովի/ համար ընդունելի է Ձեր նշած պայմանը:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

Հանձնաժողովի. Նախագահ՝		Ա. Կիրակոսյան
Անդամներ՝		Կ. Անտոնյան
		Ա. Ղալումյան
		Կ. Հարությունյան
		Ռ. Աբրահամյան
Քարտուղար՝		Ի. Եղիազարյան